

ՆՈՐ ԻՏԱԼԻԱՆ

Ամերիկայի և Եւրոպայի անկիւններից ամէն տարի հազարաւոր ճանապարհորդներ այցելում են Իտալիան: Աւերադառնալով հայրենիք, նրանք տանում են իրանց հետ անջնջելի տպաւորութիւններ Հին-Հռոմի փառքի աւերակներից, վերածնութեան ժամանակների գեղարուեստի և նկարչութեան հարստութիւններից, կապոյտ ծովից և ալիքանման լեռներից: Ադրիանոս կայսեր և Լեոն XIII պապի Հռոմը, Մեդիչիների Քլորենցիան ծածկում են նրանց քիչերից այժմեան Իտալիան: Հռոմում ուղեցոյցը օտարականին կը տանի ամէն տեղ, բացի ի հարկէ Մօնտե-Ձիտօրիօից, ուր բարձրանում է Իտալական պարլամենտի շէնքը: Մինչդեռ եթէ Իտալիայի անցեալը լի է պղպիտի աննման գեղեցկութիւնով և մեծութիւնով, եթէ այդ անցեալն աւելի, քան միւս երկրների անցեալը, կազմում է համամարդկային քաղաքակրթութեան սեփականութիւն, ուրեմն կայ մի մեծ կենդանի կապ անցեալի և ներկայի մէջ և այդ կապն իտալական ժողովուրդն է: Եւ կգտնուի՝ արդեօք մի կոշտացած հոգի, որը մնալով Իտալիայում, չտածէր սիրոյ գէթ մի նշոյլ: Դէպ այդ երկիրը, Իրաւացի է՛ն այն մարգարէները, որոնք գուշակում են, թէ Իտալիայի պատմական դերը վերջացած է, որոնց համար Նոր-Իտալիան Իտալիայի վախճանն է: Արդարացի են նրանք, որոնք ներկայի բոլոր մութ կողմերի մէջ նախատեսում են փառաւոր ապագայի ճառագայթներ: Չի կարելի յուսալ, որ ինքներս որոշ վճիռ կը տանք այդ հարցերին, բայց կարելի է բնեւէ այն պայմանները, որոնց մէջ առաջացաւ Նոր Իտալիան, ինչն էր դժուարացնում և այժմս էլ դժուարացնում է նրա զարգացումը և ինչումն է կայանում այդ դժուարութիւնների յաղթելու յոյսը:

Երբ 1815 թ. Նապոլէօնին յաղթողները Վիէնայի վեհաժողովում վճռում էին Եւրոպական պետութիւնների բաղդը, Իտալիայի վերաբերմամբ նրանք գտնւում էին առանձին դը-

ժուար դրութեան մէջ, Շատ հոուց պղծ երկիրը չունէր քաղաքական ազգայնական գոյութիւն, նրան իշխում էին ֆրանսիացիք, իսպանացիք, աւստրիացիք, հարստւորդները և բուլղոնները՝ ֆրանսիական և աւստրիական թագաւորների բարեկամները, Միջնադարեան Իտալիայից մնացել էին Պապական նահանգը և երկու հանրապետութիւններ՝ Վենետիկը և Զէնովայինը, որոնք վաղուց կորցրել էին իրանց ծովային յղժը։

Այդ բոլոր փոփոխեցան Նապոլէօնի օրով. նա ոչնչացրեց պղծ հանրապետութիւնները, Պապի ձեռքից խլեց նրա երկրի մի մասը, Իտալիայի մի մասը (հիւսիս-արեւմտեանը և միջերկրականի ափերը մինչև Նէապոլիս, որի մէջ էր նաև Հոմոլը) միացրեց Ֆլորենտիայի հետ, իսկ միւս մասից կապմեց իտալական կողմած իշխանութիւնը, որի մայրաքաղաքն էր Միլանը (հիւսիսային, հիւսիս-արեւելեան և Ադրիատիկ ծովի ափերը), Հարաւային Իտալիայում (նախկին Նէապոլիտական թագաւորութիւնը) նա թագաւոր կարգեց իւր եղբորը, Շատ անգամ Նապոլէօնը ասել է իտալացիներին, որ նա կամենում է նրանց քաղաքական միացման և վերածնութեան հիմքը դնել, Այս խօսքերը ժողովրդի մէջ առանձին արձագանգ չէին գտնում, որովհետև նրանք դարերի ընթացքում խորթացել էին իրանց միութեան գիտակցութիւնից, Իբրեւ ժողովուրդն զգում էր միայն վիճակորական տուրքերի բեռն ծանրութիւնը և աւելի ևս մշտական գինուոր հաւաքելու դառն հետեանքները, Իտալիայի երիտասարդութեան ծաղիկները տարւում էին դէպ Հոնոս և Դանուբի ափերը, Իսպանիա և Ռուսաստան, Միայն Իտալական իշխանութիւնից Նապոլէօնը 1812 թ. տարաւ Ռուսաստան 27,000 իտալացի, որոնցից չվերադարձան նոյն իսկ հազար հոգի։

Բայց չի կարելի ասել, որ ֆրանսիական տիրապետութեան հետեանքներն Իտալիայում սրանով վերջացան, Դարաւոր «հին կարգերը» կործանուեցան, զիւղացիների ուրիշին ենթարկուած լինելը, եկեղեցու տիրապետութիւնը՝ խախտուեցին, հաստատուեցան նոր սկզբունքներ, բոլոր քաղաքացիները օրէնքի առաջ հաւասար ճանաչուեցան, բոլոր արտոնութիւնները չքացան, Եկեղեցին ահազին հողային կալուածներ կորցնելուց զատ, զրկուեց նաև հասարակութեան վերայ ունեցած բոլոր բռնի իշխանութիւնից, Այս նոր կարգերը ֆրանսիացիք մոտորին ամէն տեղ, ուր որ միայն թափանցեց

նրանց զէնքը, մտցրին նաև Իտալիայում, Սակայն չնայած Իտալական մի բանի միապետների բոլոր վերանորոգչական ջանքերին, Իտալիայում ամէն տեղ թագաւորում էր շատ հնացած օրէնսդրութիւն, մնացել էին դեռ ևս ճորտութեան հետքերը, Հոգեւորականութիւնը ամէն տեղ, մանաւանդ հարաւում և կենտրոնում շատ բազմաթիւ և զօրեղ էր, Պապական նահանգներում նրանց ձեռքում էր նաև աշխարհական գործերի կառավարութիւնը, և պէտք է ասած, շատ վատ էին կառավարում Առանձնապէս սոցիալութեան թանձր խաւարով պատած էին պապական նահանգները և Նէօպոլիսը, սրանց կառավարիչները լուսաւորութիւնից այնպէս էին վախենում, ինչպէս կրակից, Ամէն տեղ այն մարդիկ, որոնք կաթօլիկ եկեղեցուն չէին պատկանում, լիազօր քաղաքացի չէին համարւում, Հրէաներին և բողոքականներին ամէն կերպ հալածում էին.

Եթէ հասարակութեան ստորին դասակարգը զիւղերում անձայն և հլու հետզհետեւ էր վարչական այդ կարգերին, քաղաքներում այդ լէժիմը առաջացնում էր ակներե անբաւականութիւններ, Իտալիայում քաղաքացիների մէջ տարածուած էր Փրանսիական XVIII դարու գրականութիւնը, Բացի այդ, իտալական թագաւորներից մի բանիսը ցանկանում էին իրանց տէրութեան մէջ բարենորոգութիւններ մտցնել, Օրինակ Ցոսկանիայի դուքս Լեօպոլդը ոչնչացրեց մահուան պատիժը, սահմանափակեց հոգեւորականութեան ամենակարող իրաւունքը, լուրջ կերպով զբաղուեց ժողովրդի լուսաւորութեան գործով, Սակայն այդ մասնաւոր բարենորոգումները անկարող էին փոխել ընդհանուր պատկերը, Իտալացիք դարերով խորթացել էին ամէն մի հասարակական ինքնագործունէութիւնից.

Ֆրանսիական տիրապետութիւնը մաքրեց, ջնջեց այդ բոլոր հին կարգերը, Հէնց այդ պատճառով էլ շատերը համբերութեամբ տանում էին օտարի լուծը, բացի այդ, Նապոլէոնն իր յաղթութիւնների փառքին մասնակից արեց նաև իտալացոց, դրա համար էլ զինուորական ահագին ծախքերը շատերի կարծիքով շատ էլ թանգ զին չէր այդ փառքերի համար, Նապոլէոնը մտածում էր նաև Իտալիայի նիւթական բարեկեցութեան մասին, օրինակ, նա միացրեց Զվիցերիան Միլանի հետ նոր ճանապարհով, ընդհանրապէս նա մտածում էր հաղորդակցութեան մասին, որը նրանից առաջ ողբալի դրութեան մէջ էր, Նապոլէոնի ընկնելուց յետոյ, Եւրոպայի կառավարիչներն ու

բաղադրագետներն, որոնք հաւաքուել էին Վիեննայում, նպատակ էին դրել վերականգնել Եւրոպայում նապօրէնեան կոիւնների ժամանակ խանդարուած կարգը—հին թագաւորութիւններն իրանց սահմաններով: Բայց Իտալիայի վերաբերմամբ չի կարելի ասել, թէ նրանք վերականգնեցին ամէն բան հնի նման, ոչ Վենետիկին և ոչ էլ Ջենովային չվերադարձրին իրանց հանրապետական կազմութիւնը: Վենետիկը միացուեց Լոմբարդ Վենետիկեան թագաւորութեան հետ, որը Աւստրիական տիրապետութեան տակ անցաւ, իսկ Ջենովան միացրին Պիեմօնտի թագաւորութեան հետ: Իսկ միւս թագաւորութիւններին վերադարձրին իրանց իշխանութիւնները: Բայց պէտք է նկատել, որ միմիայն Պիեմօնտումը ժողովուրդն ու թագաւորը մի ազգի էին պատկանում, նէապօլում կառավարում էին Փրանսիական բուրժուաները, Տոսկանայում, Պարմում և Մոդենում գերմանական Հարսբուրգները: Բայց Աւստրիան, տիրելով Իտալիայի մեծ մասին, ահագին ծնշում էր դործ դնում իտալական բոլոր դործերի վրայ: Օրինակ. նէապօլսի իշխանը ոչինչ չէր կարող ձեռնարկել առանց Աւստրիայի համաձայնութեան: Օտարների այս յօժը յաճախ շատ աւելի ծանր էր իտալացի հայրենասէրների համար, քան Փրանսիական տիրապետութիւնը: Նապօլեոնը սիրով խօսում էր իտալական ազգի մեծութեան և Իտալիայի վերածնութեան մասին, իսկ Աւստրիացիք հենց սկզբից աշխատում էին խեղդել իտալացիների ազգայնական զգացմունքները: Աւստրիական ամենազօր նախարար Մետտերնիի ասելով, Իտալիան լոկ աշխարհագրական մի տեղին (une expression géographique). Աւստրիացիք ամէնից շատ ուշադրութիւն էին դարձնում ոստիկանութեան և ժողովրդի շարժումների հսկողութեան վերայ: 2ի կարելի ասել, թէ Աւստրիական կառավարութիւնը ոչինչ չէր անում նոր գաւառների նիւթական վերաբերմամբ, բայց այդ բոլոր ջանքերը ջլատուում էին, շնորհիւ գէպ կառավարողներն ունեցած կասկածի և Վիեննայից ուղարկուած գերմանական աստիճանաւորների բռնակալութեան: Իտալիայի միւս մասերում իրերի դրութիւնն աւելի վատ էր: Վերադարձած թագաւորներից շատերը կարծում էին, թէ իրանց տիրապետութիւնն աւելի զօրեղացնելու համար, անհրաժեշտ է կործանել Փրանսիացոց մտցրած բոլոր կարգերը: Պիեմօնտի թագաւորը նորից վերականգնեց հոգեւորականնե-

րի իրաւունքը և աշխուկանների միջնադարեան արտօնութիւնները:

Էին կարգերն աւելի լրիւ կերպով վերականգնուեցին պապական նահանգներում: Նորից իրաւունքներն անցան հոգևորականների ձեռքը, նորից բացուեցին բոլոր վանքերը (1800-ից աւելի արական և 600 իգական), վերահաստատուեց ինկվիզիցիան: Հերետիկոսներին և ապատամիտներին դատելու համար, նոյն իսկ ծաղիկ պատուաւաստելն ու փողոցների լուսաւորութիւնը որ մտցրած էր ֆրանսիացիների ձեռքով, ոչնչացուեցին: Այս բոլորը աւելի կամ պակաս չափերով կրկնուեց իսաւական միւս տէրութիւններում:

Իտալացիք աւելի ևս դժգոհ էին հին կարգերի վերականգնելուց այն պատճառով, որ ֆրանսիայում Նապոլէօնին յաղթողները, թէև վերագործրին բուրբոնեան տունը, բայց ստիպեցին թագաւորին ընդունել վարտիան (հրովարտակը), որով օրէնսդրական իրաւունքն անցնում էր պարլամենտին: Աւստրիան Մետտերնիխի ղեկավարութեամբ ամէն միջոց գործ էր դնում ժողովրդի դարգացման առաջն առնելու համար: Այս երկու ձգտումներն — ազգայնական անկախութիւնը և ներքին ազատութիւնն՝ առաջնորդող էին հանդիսանում իտալական ապստարար շարժման ժամանակ: Այդ երկուսն էլ մղում էին իտալացիներին կռուելու աւստրիացիների դէմ: Եւ այդ կռիւների պատմութիւնն Իտալիայի ազատութեան պատմութիւնն է: Բայց նրանց մէջ պէտք է զննազանել երկու շրջան: Առաջին շրջանը վերջանում է 49 թուականով: Այս շրջանում կազմւում էին դաւադրութիւններ, լինում էին փորձեր տապալելու տիրող կառավարութիւնը: Սակայն չկար դրական ծրագիր, թէ ինչպէս միացնել և զօրացնել Իտալիան: Երկրորդ շրջանում շարժման գլուխ է անցնում Պիէմօնտի սահմանադրական թագաւորութիւնը. իր շուրջն է համախմբում իտալական բոլոր հայրենասէրների և իրականացնում է նրանց տենչանքներն — իտալական միութիւնը: Այս երկու շրջանների քնաւորութիւններն էապէս տարբեր են իրարից:

Առաջին շրջանի պատմութիւնը հարուստ է ողբերգական և սրտաշարժ միջնադէպերով: Սակայն, ինչպէս այդ պատահում է յաճախ, վեհ զգացմունքներին չէին համապատասխանում ոչ նպատակի պարզ հասկացողութիւնը և ոչ էլ այն՝ թէ ինչ միջոցներով կարելի է հասնել այդ նպատակին: Զինուո-

րական դաւադրութիւնն ու ապստամբութիւնները պատրաստուում էին մեծ մասամբ այն գաղտնի ընկերութիւնների ձեռքով, որոնցով ի էր Իտալիան դեռ XVIII դարի վերջերից, Այդ ընկերութիւններից ամենայայտնին «կարբոնարներն» (ածխագործների) ընկերութիւնն էր, որը հիմնուել էր Նէապօլիտական թագաւորութեան մէջ դեռ Ֆրանսիացոց տիրապետութեան ժամանակ, Ֆրանսիացիներին դուրս բշլուել նպատակով։ Այժմ կարբոնարներն իրանց մտադրութիւնը դարձրին աւստրիացոց դէմ, որոնց նրանք համարում էին Իտալիայի միացման ամենամեծ խօչընդոտը։ Աւստրիական կառավարութիւնը անխնայ կերպով հալածում էր նրանց և նոյնն էլ ստիպում էր անել նաև իտալական միւս պետութիւններին — խիստ միջոցներ ձեռք առնել կարբոնարների դէմ։ Առանձնապէս խիստ էին վերաբերւում պապերը, որովհետև կարբոնարներն համարում էին ոչ միայն իբրև խռովարարներ, այլ ազատամիտներ։ Լեոն XII-ը (1824—29) հրատարակեց մի օրէնք, որով տաժոնակիր աշխատանքի էին դատապարտւում իր այն հպատակներն, որոնք ճանաչելով որ և է գաղտնի ընկերութեան անդամի չէին մատուցում նրան։ Բայց կարբոնարները կարողանում էին յաջող կերպով ծածկել իրանց գործերն ու խորհրդակցութիւններն ուստիկաններից։ Գաղտնի ընկերութիւնները վաղուց ի վեր ծաղկում էին Իտալիայում, մանաւանդ հարաւային մասերում, որը յայտնի էր իւր աւազակային խմբերով և իտալական գիւղացիները միշտ պատսպարում էին ուստիկանութեան կողմից հետամուտ եղածներին։ Հատ սպաներ նոյնպէս պատկանում էին այդ գաղտնի ընկերութիւնների անդամների թուին։ Դրանով էլ բացատրւում են այնքան յաճախ կրկնուող զինուորական ապստամբութիւնները։

1821 թուին բռնկուեց Նէապօլում անկարգութիւն։ Թագաւորը ժողովրդին հանգստացնելու համար շնորհեց սահմանադրութիւն, որի հիման վերայ բոլոր օրէնքներն անցնում էին ժողովրդի լիազօրների ձեռքը։ Ինքը թագաւորը երդուեց նոր կարգերին հնազանդ լինել, բայց աւստրիացիք յիշեցրին թագաւորին, որ 1815 թ. նա խոստացել է ոչ մի հիմնարկութիւն չմտնել առանց իրենց թոյլտւութեան. այդ պատճառով աւստրիացոց զօրքը վերականգնեց Նէապօլում հին կարգերը։

Աւստրիացոց ատում էին և՛ մեծերը և՛ փոքրերը։ Աւստրիացոց կառավարութեան համար արդիւնքի ամենամեծ աղբիւր-

ներից մէկն էլ համարուում էր ծխախոտի մենաւաճառութիւնը: Ծխախոտ և սիգար վաճառելու իրաւունքը գտնւում էր պետութեան ձեռքում: 1847 թուականի վերջերում Միլանի բնակիչները վճռեցին բոլորովին ծխախոտ չծխել, որպէս զի այդպիսով զգալի փնաս հասցնեն աւստրիացոց զանձարանին: Եւ իսկապէս յունուարի 1-ին և 2-ին քաղաքում ոչ ոք չէր ծխում, բացի աւստրիական զինուորներից, որոնց ձեռքից աւստրիացիք աշխատում էին խլել ծխախոտը: Աւելի լուրջ անկարգութիւն առաջացնելու համար, թէ որ և է այլ նպատակով, աւստրիական կուսակալը հրամայեց ցորքին կրկնակի բանակութեամբ ծխախոտ տալ: Բոլոր զինուորներն ոչ միայն ծխում էին, այլ և աշխատում էին ծուխն անց ու դարձ անողների երեսին փչել: Այդպիսով ընդհարում առաջացաւ. զինուորները սրբորը մերկացրին և 65 անդէն մարդ ընկան, որոնց մէջ կային նաև կանայք, երեխաներ և ծերեր: Այսպիսով աւստրիական Իտալիայում լուրջ անկարգութիւնների սկիզբը դրուեցաւ:

1848 թ. փետրուարին Ֆրանսիայում հանրապետութիւն հաստատուեցաւ: Այդ լուրը ցնցող տպաւորութիւն արաւ ամբողջ Իտալիայում: Թէև 20-ական և 30-ական թուականներում ամէն մի տէրութեան մէջ իտալացիք ամենից առաջ ցանկանում էին ազատուել աւստրիական լծից, բայց այժմ առաջ է դալիս մի ուրիշ, աւելի համարձակ զաղափար՝ միացնել Իտալիան, ստեղծել մի ամբողջութիւն նրա առանձին առանձին թագաւորութիւններից: Եթէ ժողովրդի ջանքերը և պետութիւնների զիջումները ոչնչանում էին, որովհետև Աւստրիան համաձայն չէր, ուրեմն պարզ էր, որ ուժեղ Աւստրիային կարող է դիմադրել ուժեղ և միացեալ Իտալիան:

ՍԱՐ. Մ.

(Նը շարունակուի)